

ընակ գաւառներ, թափանցեց ընտանեկան յարկերու խորքը, պեղեց, հետազոտեց, հարցաքննեց խօսուին եւ անխօսուին խորշերն հայ աշխարհին: Եւ բերաւ երեւան անթիւ անհամար նիւթեր, տեղագրական, հնախօսական, պատմական, գեղարուեստական եւ ազգագրական, լուսանկարներով եւ արտագրութեամբ գրի առնելով: Յայտնագործուեցան անլոյս աշխարհներ:

Հայ Ազգագրութեան հիմը դրուած էր արդէն: Ազգագրական այս նիւթերը ուսումնասիրելու, շտեմարանելու եւ նոյն մարզին վրայ աշխատակիցներ համախմբելու համար, հիմնեց Լալայեան «Ազգագրական Հանդէս», քիչ յետոյ նաեւ «Ազգագրական Ընկերութիւնը», եւ «Ազգագրական Թանգարանը»: Ինչ որ զարգացած ազգերու մէջ հաւաքական ոյժը կը ստեղծագործէր, ի գլուխ հանեց Լալայեան անհատական ուժով: Ինքն էր Հանդէսին ալ, Ընկերութեան ալ, Թանգարանին ալ շունչն ու հոգին:

Երկար տարիներու աշխատանք պահանջեցին անոնք. շատ ծայն հարկ եղաւ սպանել, կորով վատնել. ըստ տեսաւ ի վերջոյ Վաստակաւորը, թէ սնավաստակ չելան իր ջանքերը: Հայ Ազգագրութիւնը առած էր կերպարանք. թանգարանը գտած էր տեղ հայրենի հողին վրայ, հայ կառավարութեան հովանոյն տակ:



Վ. Լալայեան

Համաշխարհական պատերազմին ստեղծած տնտեսական ատարիմ՝ իր կրօնման: Հակառակ յառաջացած տարիքին, կը շարունակէր անիկա իր ծանապարհը առանց դուլ եւ դաղար տալու իր անձին: Հեզներով ամէն անհարթութիւն, կը տանէր յառաջ իր գիտական արշաւանքները դէպի սար ու ձոր, ուր կ'ապրէր հայ ժողովուրդը: Կը հաւաքէր հում նիւթեր, հէքեաթներ, զրոյցներ, առածներ. կը դասաւորէր, կ'ուսումնասիրէր, միշտ թարմութեամբ, աշխոյժով:

Քառասուն եւ վեց տարի գործեց Լալայեան հայ ազգագրական մարզին մէջ: Լոյս տեսան իր գրքէն մեծաթիւ հատորներ: Բայց աւելի մեծաքանակ է թերւոյն այն հատորներու, որոնք մնացին անտիպ իր գործին մէջ: Կը յիշեմ տակաւին, որքան անձկով եւ խանդավառութեամբ կը ծառէր անոնց մասին. որքան կ'ողորար աննպաստ ժամանակը, որ կը կաշկանդէր իր ձեռքերը, մամուլի յանձնելու գտնոյն: Անոնց թուին մէջ էին հայ Տնայնագործական արուեստի, Հարսանեաց, Յուդարկաւորութեան վրայ գրած ուսումնասիրութիւնները, Ուտեցիներու ազգա-

տագնապը, Կովկասեան հրապարակին կրած յեղափոխի շրջանները վերջ էին տուած Հայ ազգագրական Ընկերութեան, անոր հետ նաեւ Ազգագրական Հանդէսին: Բայց մեծ Ազգագրին միշտ խանդավառ սրտին մէջ չէին մարած յոյսերը միւսանգամ կեանք շնորհելու ինչպէս Ընկերութեան, նոյնպէս Հանդէսին: Այս յոյսերով որորուն շիջաւ իր կեանքի կրակը:

Քանի կար ջերմութիւն իր երակներուն մէջ, կ'ապրէր հա-

գրութիւնը, հարուստ հաւաքածոյքը հայկական Զարդաքանդակներու. Եկարագրութիւնը Վասպուրականի Վանքերու, Չեռագիրներու, ճոխ հաւաքածոյքները հայկական Հէքեաթներու, Առածներու եւն եւն:

Արագ էր Լալայեան իւր պրպտումներուն մէջ. ընդարձակաճաւալ էր իւր ծր սգիրը, ընդգրկող Ազգ, Աշխարհ եւ Քաղաքակրթութիւն. այս պատճառաւ ալ կը ձգտէր յանհնարինս, եւ արտադրութիւնները կը կրեն անհարթութեան նկարագիր: Արագ ընթանալով, անտեսած է շատ բան. մշտութեան չէ եղած ուշադիր, որ անհրաժեշտ էր մանաւանդ հում նիւթերու հաւաքման ժամանակ: Իր արտագրութիւններն արձանագրութիւններու, ձեռագրական յիշատակարաններու եւն կը կարօտին վերստուգութեան:

Բայց եւ այնպէս ինչ որ համըարեց Լալայեան, հաւաքեց ժամանակին. անոնք փրկուած են կորուստէն եւ պիտի մասն ստացուածք գիտութեան: Եկող սերունդները պարտաւոր են երախտագիտութեան. պիտի օրհնեն յիշատակը մեծ Վաստակաւորին:

Ու կը հարցնեմ ես ինձ ի տես անոր շտեմարանած հունձքին. Պիտի ունենայ Ազգը իւր որդիներու թուին մէջ երկրորդ մը, որ հաւասարի արդիւնքով Լալայեանի, շարունակէ նոյն խանդով այն գործը, որուն ծնունդ տուաւ Լալայեան: Պակասը զգալի կ'ընէ առ այժմ՝ կորուստին մեծութիւնը:

Հ. Ն. ԱՎՈՏՅԱՆ

ԵՐՈՒՐՆԻ ԼՍԼՍՅԵՐՆ

Սոր վշտով կարգացինք մեծ Ազգագրին մահուան լուրը († Փետր. 28):

Ահա խուզարկու մը, որ աշխատելու եռանդով տողորուած, եւ գործելու տոկանութեամբ աննկուն կը փակէ աչքերն առ յաւէտ:

Այս մեծ հայուն ծննդավայրը Լենինականն (Աղեքսանդրապոլ) եղաւ, ուր Լալայեան 1864ին աշխարհին լոյսը տեսաւ: Մանկութեան եւ պատանեկութեան ուսումները կը բաշխէ իրեն ներսէսեան Վարժարանը (Թիֆլիս):

Սրուանձտեանցի ազգագրական նիւթերը դեռ նոր սկսած էին հրատարակուիլ, Գր. Սայաթեանցի «Ծրագիր հայ ազգագրութեան» (1887) հազիւ հրատարակ ելած էր, երբ Վ. Լալայեան կը մտնէր իր երիտասարդական հասակը, հրաժեշտ կու տար գլորոցական ընթացքին: Մասնաւորապէս ազդուած Սայաթեանցի ծրագրէն, կ'որոչէ Լալայեան նուիրել ինք զինքը Հայ Ազգագրութեան¹: Հաս-

¹ Հանդէս Ամսօրեայ 1895, էջ 210: — Ազգագրական Հանդէս, Ա, էջ 5:

նելու համար այս նպատակին՝ կ'անցնի Եւրոպա, եւ ժընէվի Համալսարանին մէջ կը յաճախէ հասարակական գիտութիւններուն: Աւարտելով ուսման ընթացքը կը մնայ ժամանակ մը նոյն քաղաքը ուսումնասիրութիւններու անձնատուր, նաեւ ուսուցչական ասպարէզի վրայ պարապած:

1894ին կ'այցելէ Լալայեան Վիեննա, ուր կ'իտաճեայ ժամանակ մը Միխիթարեան Մատենադարանին մէջ խորամուխ կ'ըլլայ մատենագրական հետազոտութիւններու մէջ: Այս տեղ իր ձգտումները գնահատող եւ բարձրերող միջավայր մը կը գտնէ: Համարած առատ պաշար՝ կը փոխադրուի Լալայեան Պարիս, յաճախելու Մարդաբանական Գլորոյին (École d'Anthropologie) դասախօսութիւններուն: Մարդաբանական Ընկերութիւնը կը գնահատէ Լալայեանի կարողութիւնը եւ դայն թղթակից անդամ կ'ընտրէ. իսկ ժողովրդական աւանդութիւններու Ընկերութիւնը (Société des traditions populaires) դայն իր գործօն անդամներէն մին կ'ընէ: 1895, Մայիս 18ին Լալայեան Մարդաբանական Ընկերութեան առջեւ իր մէկ ուսումնասիրութիւնը կը կարդայ, որ է. «Les

anciens chants historiques et les traditions populaires de l'Arménie»: ճառը ծափահարութիւններով կ'ընդունուի եւ կ'որոշուի որ սպորտի²: Այս յաջողութիւններէն վերջ Լալայեան Լոզան կ'երթայ եւ մանկավարժութեան քննութիւն տալով հոն ալ վկայական կը ստանայ:

Այսչափ զինուելէ յետոյ կ'ընար արդէն Հայրենիք վերադառնալ Լալայեան: Անկիսողեւորուած էր «Ազգազրական Հանդէս» մը հիմնելու գաղափարով: Հակառակ ամէն դժուարութիւններու կը յաջողի Լալայեան 1896ին լոյս հանել «Ազգազրական Հանդէսին» առաջին գիրքը, որ կը հրատարակուէր իրրեւ «Կիւսամեայ», պատկերազարդ հանդէս: «Հանդէս Ամսօրեայ»³ հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէր, երբ արդէն վաղուց գիտէր՝ թէ խոստումնալից Լալայեանը միաքունի ազգազրական հանդէս մը հրատարակելու: «Եական պահանջը մը մեզի լիուլի դոհացում կ'ազգէ. այն է՝ խմբադիր-հրատարակչին՝ Պր. Երուանդ Լալայեանի ատակութիւնն իր ձեռնարկութեան մէջ: Պր. Ե. Լալայեան իր մասնաճիւղին մէջն է: Մենք կը ճանչնանք իւր աշխատասէր եւ անխոնջ յարատեւութիւնը: Այս թերթը հրատարակելու գաղափարը, որչափ մենք գիտենք, նոր յղացած չէ Պր. Լալայեան, այլ այս իբր տասն տարեէ հետէ յարգելի Պարոնին գաղափարականը եղած է»:

«Ազգագրական Հանդէս»ի առաջին գիրքն արդէն յայտ կը բերէր Լալայեանի ամբողջ ծրագիրն ու աշխատանքի հուժկու թափը: Ո՛րքան սրտառու է են խմբագրին այս խօսքերը⁴. «Մեր կոշտնն այժմ միայն նիւթեր հաւաքելն է, որովհետեւ դրանց պակասութեան պատճառով՝ գիտական ուսումնասիրութիւններն անհնարին են, եւ մէկէլ՝ դրանց համար ժամանակ չի պակսիլ: Մենք կը կրենք քարերը եւ երանի՛ նրան, ով կը գայ այդ քարերով ազգային ինքնուրոյնութեան չէնքը կառուցանելու եւ համամարդկային էվոլյուսիոնի օրէնքները դժելու»:

Մեծ ազգագրին անդուլ աշխատանքը միշտ կ'ընկճէ դժուարութիւնները եւ նորա-

նոր յաջողութիւններ ձեռք կը ձգէ: 1899ի Մարտին, Մկրտիչ Կաթողիկոս ամենայն Հայոց՝ Կոնդակ մը կը հանէ «առ ամենայն ուխտ Հայաստանեայց Եկեղեցւոյ դասնելոց ի Կովկաս», ուր կ'ըսէ. «սովին կոնդակաւ պարտիս ի վերայ ձեր դնեմք, որոց ընթերնուք եւ տեսանէք դայս, ամենայն կերպիւ սատար հանդիսասլիք Պ. Երուանդայ»: Եւ իրօք կը տեսնենք, որ համակիրներու բազմութիւնը կը խմբուի Լալայեանի շուրջ. եւ ահա յաջորդ տարին (1900)՝ Նոյեմբեր 21ին) Տիգրիսի մէջ կը կազմուի «Հայոց Ազգագրական Ընկերութիւնը», «նպատակ ունենալով հրատարակելու ինչպէս Ազգագրական Հանդէսն, նոյնպէս եւ այլ պարբերական հրատարակութիւններ եւն»⁵: Ե. Լալայեան իր հանդէսին առաջին 6 դրքերը հանած էր. այնուհետեւ յիշուած Ընկերութեան ծախքերով կը հրատարակուի մինչեւ վերջը: Ընկերութեան կ'անդամակցէին մեծահարուստ ազգայիններ, տիկիներ եւ օրիորդներ:

Մինչեւ 1906 Լալայեան նաեւ ուսուցչութեամբ կը զբաղէր. բայց այնուհետեւ ամբողջապէս ազգագրութեան կը նուիրէ իր ժամերը: Ամարուան հանդիսաբ կ'անցընէր Հայաստանի այլ եւ այլ կողմերն արշաւանքներ կատարելով նիւթեր հաւաքելու համար: Այսպէսով կըրցաւ ո՛չ միայն կովկասահայ քաղաքներն ու գիւղերն այցելել, այլ նաեւ յաջողեցաւ Թրքահայաստանի մէկ մասն ուսումնասիրել: Այս գիտական արշաւանքները շատ զրկանքներու հետ կապուած էին. բայց Լալայեան կարծես թէ չէր զգար դանոնք: Ահա օրինակ մը. 1904ին կը գրէր⁶. «Տեղէ-ճեղատիւ լուսանկարչական օրէկտիւով ընդօրինակեցի եւ Շարուր-Գարալաղեալի արձանագրութիւնները: Սակայն իմ տաժանելի աշխատանքս զուր անցաւ, որովհետեւ վերադարձիս մի աւտղակային խումբ տարաւ ինձնից ճանապարհորդական իրերիս հետ եւ այդ մօտ 300 ճեղատիւները: Սակայն ոչինչ, ամառս կրկին կ'երթամ լուսանկարելու»:

Արշաւանքներէն հարուստ հնագիտական աւարով ետ կը դառնար. որ առաւելապէս կ'աճէր իր կատարած պեղումներովը: Այդ

² Les anciens chants historiques et les traditions etc. Bulletin de la Société d'Anthropologie. Paris 1896, էջ 500. Revue des traditions populaires, XI, էջ 1-12, 129-138, 337-351.
³ 1895, էջ 218-219:
⁴ Ազգագրական Հանդէս, Ա, էջ 6:

⁵ Անդ, ժԲ, էջ 307. ԺԴ, էջ 185-195: Ս. Սամուէլեան Ընկերութեան հաստատման թուականը 1905 կը գնէ (Խորհրդային Հայաստան, 1931, թիւ 50, էջ 4), որ յայտնապէս սխալ է:
⁶ Անդ, ժԲ, էջ 235:

պեղումները կովկասագիտութեան համար մեծ նշանակութիւն ունին եւ ամէն կովկասագէտ երախտագիտութեամբ պիտի յիշէ Լալայեանի հսկայ դործն այս մարդին մէջ: Այս առարկաներու պահպանութեան համար կը զգար թէ թանգարան մը անհրաժեշտ է, ուստի ամէն գնով պէ՛տք էր զայն կառուցանել: Հո՛ս ալ մեծ յաղթանակ մը կը տանի մեր Ազգագրութիւնը. արդէն 1905ին Թանգարան մը կը հաստատուէ Տիգրիսի մէջ, ուր կը հաւաքուին ձեռք բերուած հին առարկաները: Այդ թանգարանը 1921ին Երեւան փոխադրուեցաւ եւ կազմեց արդի Պետական Թանգարանի ազգագրական եւ հնագիտական բաժիններու հիմը: Մինչեւ մահը՝ Լալայեան այդ բաժնին վարիչն էր:

Այս զբաղումներէն դուրս Լալայեան դեռ ժամանակ կը գտնէր ուրիշ գիտական հետազոտութիւններով պարապելու. Ս. Սամուէլեանի հետ տարիներէ ի վեր ձեռնարկած էր կազմել մասնաւորապէս Կովկասահայ եւ ընդհանրապէս ամբողջ հայ մամուլի բովանդակութեան ցուցակը, ուր կու տար մէկ մի յօդուածի բովանդակութիւնը եւ վեր կը հանէր թէ ո՛ր է անոր գիտական արժէքը: «Այս հազարաւոր թերթիկներէր բաղկացած ցուցակը մինչեւ տպագրուելը զրուած է Հայոց Ազգագրութեան Ընկերութեան Կովկասագիտական-մարդարանական գրադարանում»⁷, որմէ ամէն զբաղէտ կ'ընար օգտուել: Այդ մի եւ նոյն մատենագրանին տրամադրութեան տակ դրաւ Լալայեան (1908, Մարտին) իր ճոխ գրատունը՝ մօտ 5000 րբ. արժողութեամբ մատենաներով⁸:

Երուանդ Լալայեան իր աշխատակիցներուն մէջ ունէր նաեւ հետեւեալ անձնաւորութիւնները. Աւետիս Ախարոնեան, Վ. Փափագեան, Ք. Կարամուրզա, Մանուկ Արեգեան, Արտաշէս Արեգեան, Աւետիս Իսահակեան, Հրաչեայ Աճառեան, Կարապետ Բասմալեան, Ս. Սամուէլեան, Լէօ, Թօրամանեան, Ատրպետ եւն:

1915ի ծանր ժամանակներուն՝ Լալայեան արշաւախմբի մը գլուխն անցած՝ 4 ամսի չափ կը թափառի թրքահայ փախստականներու մէջ, ազգագրական քանի մը բեկորներ կորստէ ազատելու համար: Կը հաւաքէ 847 զրոյց (հեքեթ) եւ բազմաթիւ երգեր:

⁷ Ազգ. Հանդ. Ի, էջ 215:
⁸ Անդ. ժԲ, էջ 163:

Նոյն միջոցին Լալայեան մասնաւոր ուշադրութիւն կը դարձնէ Մշակութեան ազգագրութեան: Հասկնալու համար, թէ ինչպիսի՛ խղճմտութեամբ կը հաւաքէր նիւթերն, յառաջ կը բերեմ իր սա տողերը. «Վերստուգելու յուսով իմ հաւաքած նիւթերի հարագելու յուսով՝ ես այս աշխատութիւնը (Մուշ-Գարուն) կարդացի հետեւեալ երեք գիտականձաւորութիւնների առաջ. 1. Եղիշէ քահանայ Տէր Բարսամեանի, որ Մուշ քաղաքի ծխատէրի պաշտօն վարելով՝ շրջել է Մշի գիւղերը. 2. Մուշեղ քահանայ Տօնապետեանի, որ Մշի Արտօնք գիւղում երկար տարիներ քահանայութիւն է արել, եւ 3. Ն. Մարտիրոսեանի Մշի առաջնորդարանի քարտուղարի առջեւ, որ կազմել է Մշի դաւառարարանի բառարանը, որ արժանացել է Իրիւրեան մրցանակաբաշխութեան: Հաւատացած լինելով, որ զրի առնուած նիւթերը միանգամայն ճիշտ են, մենք տպագրութեան ենք տալիս, ապագային թողնելով լրացումներ անել, մասնաւոր սրա հաւատքի բաժնի վերաբերմամբ, որ չափազանց հետաքրքրական է»:

Գրիգոր Խալաթեանը՝ արդէն 1908ին՝ հետեւեալ կերպով կը բնորոշէր¹⁰ անոր գործը. «Երուանդ Լալայեանի հայ դաւառներին մանրակրկիտ, շատ ընդարձակ եւ զարմանալի խղճմտաւոր՝ գուցէ փոքր ինչ ցամաք, նկարագրիչներն առանձինն նշանակութիւն ունին: Այդ ուսումնասիրութիւնները, որոնք առանձին վերցրած՝ մի քանի ստուար հատորներ կը կազմեն, նրանց նշանակութիւնը ըստ արժանւոյն դեռ գնահատուած չէ...: Այնպէս բազմակողմանի եւ լիուլի նկարագրութիւն որ եւ է կովկասեան հայ դաւառի, ինչպէս տալիս է Լալայեան, դեռ տեսնուած չէ մեզմոտ. նա առաջ է բերում ոչ միայն զուտ ազգագրականը՝ «Փօյլկլօր»ի հետ միասին, այլ նաեւ մարդարանական, պատմական, բնագրական, տեղագրական եւ հնագիտական տեղեկութիւններ: Այս մե՛ծ ծառայութիւն է գիտութեան առաջ, որ պէտք է շեշտուի»:

Խալաթեանը մեր Ազգագրին ամբողջ գործունէութիւնը չէր տեսած, երբ այդ տողերը կը գրէր. եւ բնական է իր հիացումն

⁹ Անդ. ԻԶ, էջ 149:
¹⁰ Գ. Խալաթեան, Նիւթեր Հայ Ազգագրութեան պատմութեան. Խմբեան ազգագրական ժողովածու, է, էջ 51-52:

դե՛ս աւելի պիտի մեծնար, եթէ տեսնէր անոր երկերուն ամբողջական ցանկը, զոր կարելի եղածին չափ կատարեալ կը ներկայացնեմ հոս ժամանակի կարգով:

1. Ահմէդի տոպրակը. արեւելեան զրոյց. Թարգմ. Երուանդայ Լալայեանց: Թիֆլիս, 1881, 8⁰, էջ 32:

2. Սաճ Ժորժ, Վարդազոյն ամպ. մանկական վէպ. Թարգմ.: Թիֆլիս, 1882:

3. Մօլիէր, Երեւակայական հիւանդ. կատակերգութիւն երեք արարուածով. Թարգմ. Փրանսերէնից: Թիֆլիս, 1886, 8⁰, էջ 104:

4. Շիլլէր, Նենդ եւ Սէր (ինծի անմատչելի):

5. Զաւարբի բուրժուհի. հաւաքեց Ե. Լ. Թիֆլիս, 1892, 8⁰, էջ 71 [Ժողովրդագրական նիւթեր. Բ.]:

6. Տաճկաստան հոմէական հայերը. Հանդ. Ա. մ. ս., 1894, էջ 313—315:

7. Սուրբ Սարգիս. Հանդ. Ա. մ. ս., 1894, էջ 350—353:

9. Մովսէս Սորենացի ըստ ուսուցչապետ Ն. Մատի. Թարգմ.: Հանդ. Ա. մ. ս., 1895, էջ 18—20, 54—57, 108—110, 195—198, 297—300. 1898, էջ 313—316:

10. Légendes et superstitions de l'Arménie. Revue des traditions populaires. X (1895), էջ 1—5, 119—120, 193—197, 296—297:

11. Les anciens chants historiques et les traditions populaires d'Arménie. Buletin de la Société d'Anthropologie, 1896, էջ 500—510:

12. Նոյնը ուրիշ խմբագրութեամբ՝ Revue des traditions populaires. XI (1896), էջ 1—12, 129—138, 337—351:

13. Համառոտ տեսութիւն հայ ազգագրութեան: Ա. դ. գ. ար. Հանդ. Ա. (1896), էջ 7—27 (Թ. 10 եւ 11 յօդուածներու հայերէն խմբագրութիւնը):

14. Զաւարբ. Ա. դ. գ. Հանդ. Ա. (1896), էջ 116—371 (նաեւ արտատպ. Թիֆլիս, 1897, 8⁰, էջ 318 իբրեւ «Ա. հատոր»):

15. Մարդաբանութեան պատմական զարգացումը (Պետրի). Ա. Հ. Ա. 1—53:

16. Ամուսնութեան զարգացումը (Լեւտուրնո). Ա. Հ. Ա. 53—121:

17. Վարանդա. ՀԱ. Բ (1897), էջ 1—

197. Գ. (1898), էջ 338—349 (նաեւ արտատպ. Թիֆլիս, 1898, 8⁰, էջ 225):

18. Բուլանըրի կամ Հարք գաւառ (հաւաքեց Բենտէ. խմբագրեց եւ հրատ. Ե. Լ.). Ա. Հ. (նաեւ արտատպ. Ա.—Բ. Մաս, 1901, 8⁰, էջ 182 + 109):

19. Ղարաբաղի գերեզմանները. Ա. Հ. Բ., էջ 308:

20. Կենդանական վէպ. Ա. Հ. Բ., էջ 348—363:

21. Մարդաբանութիւն (Կանեսարինի). Ա. Հ. Բ., էջ 1—118:

22. Զանգեզուրի գաւառ: Ա. մաս. Սիւսիան. Ա. Հ. Գ. (1898), էջ 105—272: Բ. մաս՝ Զանգեզուր. Գ. (1899), էջ 7—117 (նաեւ արտատպ. Թիֆլիս, 1898/9, 8⁰, էջ 172 + 116):

23. Նորագոյն տեսութիւններ գերդաստանի ... ծագման մասին (Պողոթա). Ա. Հ. Գ., էջ 3—50. Գ., էջ 3—24:

24. Ծածկալեզուներ. Ա. Հ. Գ., էջ 159:

25. Գանձակի գաւառ. Ա. Հ. Ե. (1899), էջ 213—360. Զ (1900), էջ 232—282 (նաեւ արտատպ. Ա.—Բ. հատոր, Թիֆլիս, 1899—1900, 8⁰, էջ 152 + 143):

26. Գանձակի Մալախանները, Ա. Հ. Է (1901), էջ 255—270:

27. Բորչալուի գաւառ, Ա. Հ. Է, էջ 271—437. Թ (1902), էջ 197—266. Ժ (1902), էջ 112—268. ԺԱ (1904), էջ 33—128:

28. Ժողովրդական առակներ, Ա. մաս՝ Մոլլա Նասր-է-Գիւն. Ա. տպ. 1903. Բ. տպ. 1904—1905ին: Բ. մաս՝ Հորոս. 1903 (Թիֆլիս):

29. Արա Գեղեցիկ, Ա. Հ. Թ, էջ 144—159:

30. Աղեքսանդր Մակեդոնոս, Ա. Հ. Ժ, էջ 304—308:

31. Դաւիթ Անյաղթ, Ա. Հ. Ժ, էջ 309—312:

32. Նախիջևանի գաւառ — Գողթն. Ա. Հ. ԺԱ, էջ 240—336. ԺԲ (1904), էջ 109—174:

33. Զանգեզուրի գաւառ. Կապան. Մեղրութիւններ. Ա. Հ. ԺԲ, էջ 175—220:

34. Շարուր-Դարալագեաղի գաւառ. Ա. մաս՝ Վայոց Ձոր, Ա. Հ. ԺԲ, էջ 235—293. ԺԳ (1906), էջ 139—166. ԺԴ (1906), էջ 133—155. ԻԶ (1916), էջ 5—84 (գունաւոր քարտէսով):

35. Սամայ Ծոեր — Նոր Բայազետի բարբառով, Ա. Հ. ԺԳ, էջ 37—82: Արտատպութիւն (1906), էջ 48:

36. Նոր Բայազետի գաւառ, Ա. Հ. ԺԳ, էջ 167—198. ԺԴ, էջ 5—37. ԺԵ (1907), էջ 164—205. ԺԶ (1907), էջ 8—65, ԺԷ (1908), էջ 86—125. ԺԸ (1908), էջ 109—156. ԺԹ (1910), էջ 4—32, 59—84, 115—150. Ի (1911), էջ 31—60. ԻԳ (1912), էջ 123—148. ԻԴ (1913), էջ 51—59 (գունաւոր քարտէսով):

37. Նախիջևանի ոստիկանութեան շըրջան, Ա. Հ. ԺԳ, էջ 199—226. ԺԵ, էջ 133—163:

38. Հին-Նախիջևանի գաւառ (ինծի անմատչելի):

39. Ռոստոմ Զալ, Ա. Հ. ԺԴ, էջ 69—85:

40. Սոսրով Թաղախոր, Ա. Հ. ԺԴ, էջ 86—99:

41. Դաղձուրատ-Շահ, Ա. Հ. ԺԴ, էջ 100—104:

42. Պառուաշունչ. Զաւարբի Հէքիաթներից. Ալէքսանդրապօլ, 1911, էջ 27:

43. Սեւան, Ա. Հ. ԺԷ (1908), էջ 53—85:

44. Ապարանի Բանահիւսութիւնից, Ա. Հ. ԺԹ (1910), էջ 151—155:

45. Զաւարբի Բանահիւսութիւնից, Ա. Հ. ԺԹ, էջ 158—164:

46. Վասպուրական, Ա. Հ. Ի (1910), էջ 116—202. ԻԱ (1912), էջ 37—100. ԻԲ (1912), էջ 85—100, 117—197. ԻԳ (1912), էջ 149—196. ԻԴ (1913), էջ 117—180. ԻԵ (1914), էջ 21—60. ԻԶ, էջ 196—212 (նաեւ արտատպ. Վասպուրականի Ազգագրութիւն. Թիֆլիս, 1911, 8⁰, էջ 82: — Բանահիւսութիւն՝ Ա. պրակ. անդ, 1912, էջ 197. Բ. պրակ. անդ, 1912, էջ 198—230: — Նշանաւոր վանքեր. Ա. տարի. անդ, 1912, էջ 100:

47. Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի. Ա. պրակ. Թիֆլիս, 1915, 4⁰, էջ 1047:

48. Ծիսական կարգերը Հայոց մէջ, Ա. Հ. ԻԱ, էջ 165—199. ԻԳ, էջ 197—230. ԻԶ (1916), էջ 213—219 (նաեւ կիսովին արտատպ. Թիֆլիս, 1913, էջ 74):

49. Կեչառիսի վանքը, Ա. Հ. ԻԲ, էջ 101—112:

49. Վասպուրականի Ասորիները, Ա. Հ. ԻԴ, էջ 181—232:

50. Մուշ-Տարօն, Ազգագրութիւն, Ա. Հ. ԻԶ (1916), էջ 149—195:

52. Մարդաբաններ Հայ Բանահիւսութեան, Ա.—Գ. զերբ. Թիֆլիս-էջմիածին

(տարին չէ նշանակուած) ... Գ. զերբ, էջ 269:

53. Նիժի եւ Վարդաշէնի Ուտիները ազգագրական տեսակէտից: Տեղեկագիր գիտութեան եւ արուեստի Ինստիտուտի, 1926 (Երեւան), Թ. 1, էջ 155—171:

54. Կոտայք, հաշուետուութիւն. Տեղեկագիր գիտութեան եւ արուեստի Ինստիտուտի, 1927 (Երեւան), Թիւ 2, էջ 220—225:

55. Յուզարկաւորութեան եւ գերեզմանների զարգացումը Հայաստանում. Տեղեկագիր գիտ. եւ ար. Ինստ., 1928, Թիւ 3, էջ 82—118:

56. Պեղումները Հայաստանում (մամուլի տակ):

Հրատարակած է նաեւ լուսանկարներու արթններ.

57. Լուսանկար Ալբոմ Վայոց ձորի:

58. Լուսանկար Ալբոմ Նոր-Բայազետ գաւառի:

59. Լուսանկար Ալբոմ Վասպուրականի (երկու հատորով):

Այս երկերու մէջէն «Գանձակի գաւառ» (Թիւ 25) ու «Բուլանըր» (Թիւ 18) Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած են. իսկ «Նոր-Բայազետի գաւառը»՝ Ղուկասեան մրցանակով պսակուած է:

Մեծալատասկ Լալայեանի գործն այնքան մեծ ու արդիւնալից է, որ հարեանցի ախարկով մը չէ՛ կարելի անոր տարողութիւնը պարփակել: Ես առիթն ունեցած եմ անոր Ազգագրական Հանդէսներուն մէջ խորատուելու. եւ պրոպոնիւսներու ընթացքին կրած տպաւորութիւնս սա է. Լալայեանի կրած գործունէութիւնը յորդհոս ազգային գործունէութիւնը յորդհոս արդիւնալի մը նման մշտատեւ եւ բեղուն եղած է: Մեր գրական հին եւ նոր շրջաններուն մէջ՝ Լալայեանի զերբը շատ քիչերու վիճակուած զերբերէն է: Շատ զբաղան մշակներ ունինք. բայց Լալայեանի նման անդուլ ջանքով եւ հսկայ արտագրութեամբ հեղինակներ քիչ ունեցած ենք¹¹: Եւ սակայն — ցաւալի է

¹¹ Ըմբռնելու համար թէ էնչ հսկայական ծրագրով գործքի կը ձեռնարկէր Լալայեան, կը ներկայացնեմ իր «Վասպուրական» երկին ամբողջական ծրագիրը:

1. Ամբողջ վանի նահանգի տեղագրութիւնը, պատմական եւ հնագրական տեղեկութիւններով:
2. Ամբողջ նահանգի բոլոր վանքերի նկարագրութիւնը:

